



Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցիւզով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաւորութեամբ 2 կոպէկով.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Քաղաքային վարչութեան հոգեւորից մէկը.—
ԵՆԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ կիե-
վից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբա-
գրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարտկաւորանից. Արտաքին
լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սալվինի Երեւոյ.
Եւս.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՎՈՐԻՑ
ՄԷԿԸ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ներ-
կայումս զբաղված է մասային ճգնա-
ժամ կոչված հարցով: Վաճառանոցում
բարձրացել է մի գինը: Սակայն չը նախ-
ընդհանրացնենք, անսահմանա-
նորը մնացու կենդանիներ չեն բերում
վաճառանոց մեծ քանակութեամբ եւ քա-
ղաք եկած կենդանիները խոլի մարմն-
վում են նոյն օրը: Մնացու ապրանքի ա-
ւելորդ պաշար չը կայ քաղաքում, որ
պահպանել լինի անսպասելի դէպքերի, ան-
հրաժեշտ մեծ կարիքների համար:

Հարց է ծագում, թէ արդեօք արհես-
տական է այդ ճգնաժամը, արդեօք հե-
տեան է նա որ է չարամիտ մեքենա-
յութեան, թէ բնական աղբեղութիւնների
եւ պատճառների:

Պէտք է նկատել, որ այս տարի ձմեռը
Անդրկովկասի գիւղացիները համեմատա-
բար աւելի էին ապահովված անասուննե-
րի կերակրի կողմից, քան նախորդ տարի-
ները: Դարձումս սկսվեց վաղ եւ արօտները
օգնութեան հասան, կարողութիւն տալով
գիւղացիներին չը ծախել իրանց անասուն-
ներին եւ պահել տանը ու նրանց գիրաց-
նել աւելի լաւ գնեցով ծախելու համար,
կամ աւելացնել իրանց հօտերը:

Ինչպէս որ ստիպւած է ծախել իր ան-
ասուններին, ուստի վաճառանոցում պա-
կասել է ծախու ապրանքի քանակութիւ-
նը: Այդպիսով, մի գինը բարձրանալը
հետեանք է ձախորդ եւ անսպասու աղբե-
ղութիւնների, այլ գիւղացի անասնու-
թեան մէջ տեղի ունեցած բարեյաջող
հանգամանքների:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱԼՎԻՆԻ «ՕԹԵԼԼՈՆ»

Գեղարուեստին ծառայողներից գուցէ ոչ մէ-
կին այնքան հարկաւոր չէ փոփոխութիւններ
տեսնել, որքան զբաղմունքի գերաստին: Հար-
կաւոր են նրան այդ փոփոխութիւնները մի
քանի պատճառներով. նախ՝ որքան էլ գերա-
սանը տաղանդաւոր լինի, որքան նա զարգա-
ցած մարդ լինի, գոյուր է նրան կատարելա-
գործվել, եթէ նա տարիների ընթացքում նըս-
տած է մի տեղ, եթէ նա չէ տեսնում իր առաջ
գեղեցիկ օրինակներ, չէ լսում ուրիշ խա-
ղի իմաստ: Երկրորդ՝ մենք, հայ գերաստի-
ներս, զրկված ենք այն մարտուղ, որը պէտք է
լինի թատրոնի հոգին, որը պէտք է ոչ թէ զե-
կավարել, այլ եւ ուղղութիւն տայ ներկայա-
ցումներին. դա բեմիսեօրն է ի մեծ դժբա-
ղութիւն մեզ, մենք չունենք այդ զեկավարը
եւ երեւի շուտ էլ չենք ունենալ: Եւ ահա հայ
գերաստի, գտնվելով մշտապէս Թիֆլիսում
կամ Բազում, միջոց չունի գնալ տեսնել գե-
ղեցիկ օրինակներ եւ ակամայից նա միակերպ
է դառնում:

Կենսաբան լաւ տարիները անցկացնելով մայ-
րաքաղաքներում եւ յետոյ կրկին յաճախ լինե-
լով Մոսկվա, Պետերբուրգ, — եւ տեսել եւ շատ
յայտնի գերաստիներ ու գերաստիներ եւ
չատերի հետ ծանոթացել եւ. դրանք բոլորն էլ
ինձանից հարցութեամբ են արել մեր հայ թատ-

Անկախած կան Թիֆլիսի մայրին առե-
տրի մէջ մեծ պահասութիւններ, որոնք
վայր են գցում Թիֆլիսի վաճառանոցի
անունը եւ ստեղծում անսպասու պայման-
ներ անասնավաճառների համար, սակայն
նրանք այսօր չեն երեւան եկել եւ գոր-
ծում են տարիների ընթացքում:

Քաղաքային վարչութիւնը, յամենայն
դէպս, պարտաւոր է մի շարք միջոցներ
ձեռք առնել կանոնաւորելու աղբաբնա-
կութեան անհրաժեշտ մի այնպիսի
նշանաւոր առարկայի վաճառումը, ինչպէս
է միւր եւ վերջ գնել այն բոլոր գանգա-
ներին, որոնք անդադար լսվում են սակա-
զին եւ անկարգ վաճառքի մասին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐՈՒՆ

«Ձէ, թշուառ չէ Թիւրքիան»... Այս բացա-
կանութիւնը պիտի գուրս թուէ ընթերցողի
ընթանից ամեն անգամ, երբ նա սկսէ կարգա-
թիւրքական գործերի նկարագրութիւնը Բա-
գուր «Կազմի» լրագրի մէջ: Լաւ կարողանում
են գուրդ-գարգարել պ. Թովչիբաշիւի խըմ-
բագրատանը: Հաւատարմով այդ ճանաչումն իր-
կարագրութիւններին, դուք, ընթերցող, պիտի
հաւատարմ եւ այն բանին, թէ մասնագիտա-
արեւելքը ամբողջովին կեանք է, առաջագիտու-
թիւն է, քաղաքակրթութիւն է: Եւ որովհե-
տեւ այդ երկմտիկ աշխարհի փառքն ու պատը
Թիւրքիան է, ուստի, երբ հարկաւոր է գրել
նրա մասին, գործընդեր իրանց գրիչը թաթա-
խում են ոչ թէ հասարակ թանաքի, այլ ծիա-
ժանի մէջ եւ նրա բոլոր գոյները ծառայեցնում
Ալլահի ստուեր փառքիս իմաստութիւնը,
հեռատեսութիւնը, մեծ ու լուսաւոր խելը
փառաբանելու համար: Պատմում են Թիւր-
քիայի կենսաբան այնպիսի բաներ, որոնք փո-
խադրում են ձեզ «Հազար ու մէկ գիշերներին»
միջնապայրը եւ դուք, եթէ մի քանի մոռա-
նաք իրականութիւնը, մոռանաք գործերին,
պիտի բացականչեք. «Ա՛հ, ինչ դիւթական եր-
կիր, երանք այնտեղ ապրողներ: Շատ հեռու
կը գնայինք, եթէ սկսէինք Բագուր լրագրի
մարգարիտներ հանել մեր այս սասածնից հա-
տատուութեան համար: Բաւականանաք բոլորովին

ունի մասին: Բայց սրտումս մի փափագ
էր մնացել, չէի տեսել հերոսների հերո-
սին—Թոմաս Սալվինին: Շատ էի կարգացել
նրա մասին, շատ էի լսել, բայց չէի տեսել
իսկ չէ որ դերասանին պէտք է տեսնել, որ
կարելի լինի հասկանալ նրա խաղի իմաստը
Այն, դերասանը իր կենդանութեան ժամանակ
անուն ունի, հռչակված է, փառաբանվում է,
բայց հէնց որ մեռում—մոռնում է նրա հետ ա-
րուեստի եղանակը: Դուք տեսնում էք հան-
գուցեալ Ալվազովսկիից յետոյ նրա պատկեր-
ները, կարգում էք Դանիէլ, Սերիանէս, Շէքս-
պիր, Գրիբոեդով, Գոգոյ, Գամառ-Քալթիպա, Բա-
ֆֆի, տեսնում էք մոզէյներում՝ Ֆիդիկոն
եւ Պարաքսիտելի, Միքէլ Անջելոյի քանդակա-
գործութիւնը, բայց ինչպէս վերականգնել ձեռ-
առաջ, յարգելի ընթերցող, Բիւնի, Գարրիկի,
Մօշկովի, մեր վարդապետ Ալեքսանի խաղե-
րը: Աւանդ, այդ չէ կարելի: Շնորհիւ հանձնարե-
լիցիսն, մեր ապագայ սերունդները կը լսեն
յայտնի դերասանների ձայները, բայց արդեօք
երեւան կը գայ մի ուրիշ հանձնարեղ մարդ,
որ կարողանայ խաղն էլ անմահացնել...

Սակայն դառնանք Սալվինին:
Թոմաս Սալվինին, վերջին մօտիկանը, արդէն
10 տարուց աւելի է, ինչ թողել է թատրոնը
եւ իր գեղեցիկ ապարանքում, Ֆլորէնցիայում,
հանգստութիւն է վայելում իր բազմաշարժա-
յալատանքից յետոյ: Նա խաղում էր եր-
բան Իտալիայի զանազան քաղաքներում,
բայց չէր հեռանում իր գեղեցիկ հայրենիքից:
Նա ուրախութեամբ պարապում էր տաղանդա-
ւոր երիտասարդների հետ եւ նրա ամենափո-
րած աշակերտութիւն է հռչակաւոր Էլէօնորա

Թարմ, իրական փաստով: Դեռ հեռագիրը նոր
է սկսել հաղորդել տեղեկութիւններ այն մա-
սին, որ Թիւրք կառավարութիւնը պահանջում
է ոչնչացնել եւրօպական պատասանները Կ. Պոլ-
սում, իսկ դեպքանները միաձայն մերժում են
այդ առաջարկութիւնը,—եւ ահա «Կազմի»-ի
մէջ Օսմանլի գրում է Կ. Պոլսից, թէ Արդիւ-
Համիդի հանձնարն աւելի մեծ եւ կենսական
հարցի մէջ չէր կարող երեւան գալ: Ահա թէ
ինչպէս: Թղթակիցը համարեա արտասուելով
զանգատվում է, որ եւրօպական պետութիւն-
ները խառնվում են Թիւրքացիներին գործերի
մէջ: Յայտնի է, որ օտարահպատակները Թիւր-
քիայում ենթարկվում են միայն իրանց պե-
տութիւնների հիւպատոսական դատարանին:
Դա մի հին իրաւունք է, որ քրիստոնեայ պե-
տութիւնները ձեռք են բերել, ի նկատի ու-
նենալով, որ Թիւրքիան մի կիսավայրենի եր-
կիր է, ուր չէ կարող լինել արդարադատու-
թիւն: Թղթակից Օսմանլի ասում է, որ դա
անարդարութիւն է, որովհետեւ այժմ Թիւր-
քիայում լաւ դատարաններ կան, որոնք զե-
կավարում են Նապօլէօնի օրէնսդրով: Ամեն-
քեր յայտնի է, որ Թիւրքիայում շատ քան
կայ... Թղթի վրա, կայ նոյն իսկ սահմանա-
դրութիւն, բայց եւ այդպէս, ոչինչ չէ խան-
գարում, որ նա լինի լաւագոյնների աշխարհ,
ուր պարբերաբար ջարդեր են կատարվում
Բայց տեսե՛ք թէ ինչ հէքիաթներ է պատմում
Օսմանլի:

Եւրօպական պետութիւնները, որոնք վա-
ղուց սովորել են միջամտել Թիւրքացի ներ-
քին գործերի մէջ, դրանից օգուտներ քաղել
իրանց համար, գոյուրութեամբ են հաշու-
վում Թիւրքերի այն ձգտման հետ, որ աշ-
խատում է ազատվել նրանց խնամակալու-
թիւնից, որքան էլ այդ ձգտումը ինչու ըստ
ինքեան արդարացի է, պետութիւնները չեն
կամենում յօժար կամքով հրաժարվել իրանց
ընտան պատմական դիրքից եւ աշխատում
են, ի հարկէ, երկարացնել այդ դիրքը որ-
քան հնարաւոր է: Բայց միւս կողմից Թիւր-
քերն էլ, աւելի եւ աւելի իւրացնելով ազ-
գային ինքնաձայնագրութիւն, սկսել են դը-
ժուարութեամբ տանել այդ խնամակալու-
թիւնը: Նրանց վիրաւորում էին մշտական
օտարերկրայ միջամտութիւնները եւ Թիւր-
քիայի մեծանալու առաջն առնելու սխտե-
մական ցանկութիւնը: Գրգռված հասարա-
կական կարծիքը աւելի եւ աւելի ստիպու-
ղաբար էր պահանջում կառավարութիւնից

Դուրէն... աշակերտութիւն, որ արժանի է իր մեծ
եւ հռչակված վարժապետի անունին: Երկու-
տարի առաջ ուստաց արքունական թատրոն-
ների գիրեկտոր նշանակվեց իշխան Վոլկոնսկի,
մի երիտասարդ, որ շատ նուիրված է գեղա-
րուեստին: Իշխանի այդ սէրը դէպի գեղա-
րուեստը եւ գրականութիւնը ծառայողական է-
նրա պապն էր յայտնի գեղարքիտ, իսկ հայրը
լուսաւորութեան միջնորդ օգնական Երիտա-
սարդ իշխանը, աւարտելով Պետերբուրգի հա-
մալսարանը, երկար ճանապարհորդել է Եւրօ-
պայում, մանաւանդ Իտալիայում, ռուսմա-
սիրել է գեղարուեստի բոլոր ճիւղերը եւ եղել
է յաճախ Թոմաս Սալվինիի մօտ: Եւ ահա, երբ
իշխանը նշանակվեց գիրեկտոր, նա հրաւիրեց
անցնել տարի Սալվինին մի քանի ներկայա-
ցում տալու Պետերբուրգում եւ Մոսկվայում:

Անցեալ տարի, երբ եւ կարգացել, որ Սալ-
վինի գալիս է Ռուսաստան, իմ ուրախու-
թեանս վերջ չը կար: Եւ արդէն յոյսս կարել
էի տեսնել այդ բեմական հսկային. շատ աշ-
խատեցի, որ գնամ տեսնել, բայց չաղողվեց:
Սակայն մի բանով մխիթարվում էի. ձերբունի
խոստացաւ այս տարի եւս գալ եւ աւելի մեծ
խաղերաւարտութիւն: Անցեալ տարի նա խաղաց
«Օթելլօ» եւ «Բաղդադական մահ»: Իսկ այս տա-
րի—«Օթելլօ», «Արքայ Լիր», «Քաղաքական
մահ», «Բնագոյն»:

Երբ այս տարի մեծ պատեր շատերին ասում
էի Թիֆլիսում, թէ գնում եմ Սալվինին տեսնե-
լու—ծիծաղում էին վրաս... Նոյն բանը եւ այս-
տեղ, Մոսկվա, շատերին զարմացրեց, բայց ինչ
արած... չէ որ Թիւրքի առաջն ասում է. «Փառ-
ուեստը համար կան մարդիկ, որոնք Համա-

ազատել օտար երկրացիների լուծից եւ Ար-
գիւ-Համիդի գոյոյ կառավարութիւնը պար-
տաւոր էր, վերջապէս, գիշել հասարակական
կարծիքին:

Այսպէս է եւ եւրօպական պատասանների
հարցը: Թղթակիցը ուղղակի բառ չէ գտնում
աւելու, թէ ինչ սարսափելի չարիքներ են այդ
պատասանները. դրանք աւազակութեան, մաք-
սանհնգութեան օրեր են, դրանք են Թիւր-
քիա բերում եւ տարածում այնպիսի լրագրե-
րներ, վրդովեցուցիչ գրուածքներ, որոնք ար-
գելվում են կառավարութեան կողմից: Մի
խօսքով, նրանք չեն թողնում, որ եղբոր անէ
այն, ինչ ուզում է, չեն թողնում, որ Թիւր-
քական ընտան միանգամայն ինքնազուրկ լինի
Եւ արդիսի մեծ անարդարութիւն եւրօպացի-
ների կողմից: Հա, փառք Ալլահին, այժմ՝ էլ
Թիւրքիան այն չէ, ինչ էր այն ժամանակ, երբ
Իւրաքանիւր եւրօպական պետութիւն իր հա-
մար առանձին, կառավարութեան հսկողու-
թիւնից ազատ պատաստուն էր հիմնում Այժմ...
Բայց ինչ է այժմ: Օսմանլիները այս հարցին
պատասխանել կարող են զանազան հէքիաթ-
ներով: Բայց ո՛վ է այժմեան ժամանակ հաւա-
տում հէքիաթներին: Հաւատում են գոնէ այն
բազմաթիւ Թիւրք պաշտօնեաները, որոնք
խեղդվելով Թիւրքական իրականութեան մէջ,
փախչում են արտասահման:—Ահա ինչի են
հասել Թիւրքիայի ջատագույնները: Միծաղել
նրանց ետանդի վրա՝ բաւական չէ. պէտք է
Դրիբեզգովի խօսքերով պատասխանել նրանց—
послушай, ври, да знай же мёрты!

ՆԱՄԱԿ ԿԻՆՎԻՑ

Ապրիլի 25-ին

Ապրիլի 19-ից քաղաքը մեծ չարժան մէջ
է. վաղուց է, որ Կիւնդը լաւ օպերա չէր տե-
սել, բայց ահա Զուրաբովը եկաւ եւ նորից
սպասցուցեց, որ լաւ օպերան կարող է հասա-
րակութեան ստիպել մի կողմ թողնել օպե-
րետաւ ու ֆարսը: Եւ հետեւել լուրջ մուզի-
կային: Պ. Զուրաբովը եկել է Կիւնդ լաւ, ա-
ռաջնակարգ օպերային ոյժերով: Թատրոնում
տեղ չէ լինում, տոմսակները մի քանի օր
ներկայացումից առաջ արդէն վաճառվում են
եւ անտարբերները չէ կարող ուրախալ, որ
լաւ օպերան միշտ աշողութիւն կունենայ: Ա-
զան կերթան: Եւ աւելին կասեմ... Ապրիլի
3-ին պատու ունեցալ ծանօթանալու հռչակա-
ւոր դերասանի հետ եւ երբ յայտնեցի հեռաւոր
կովկասից գալուս նպատակը—նա իր մեծ եւ
գեղեցիկ աչքերը աւելի մեծացնելով զարմա-
նով նայեց եւ յետոյ... Բայց այդ ծանօթու-
թեան մասին մի ուրիշ յորդաւածում. այժմ դառ-
նա՞ք գործին:

Տոմսակները վաղօրօք ծախվել էին, ուստի
եւ պէտք է գրկվէի «Օթելլօյից», բայց Մօսկ-
վայի հայերից մէկը հրաւիրեց ինձ իր օթելակը
եւ եւ տեսալ այն, որը հաղիւ թէ մէկ էլ իմ
կենսաբան կը տեսնեմ: «Օթելլօ» Սալվինի
սիրած դերն է. Օթելլօ—Սալվինի յայտնի է
ամբողջ Եւրօպայում եւ Ամերիկայում: «Օթելլ-
օ» մէջ տեսել է նրան 1875 թւին Լօնդոն-
ում յայտնի Լիւիսը, որը տեսել էր նախպէս
1832 թւին Բիւնի, եւ համեմատելով այդ եր-
կու հանձնարներին, Լիւիսի տեղ տեղ Սալվինին
գերադասում է Բիւնի:

Եւ ահա ժամի 8-ին եւ Մօսկվայի Փոքր
թատրոնում եւ:

Երաժշտութիւն չը կայ. դա Սալվինիի պա-
հանջներից մէկն է, որ իր ներկայացումներին
ժամանակ չը լինի երաժշտութիւն, որովհետեւ
անտեղի վայրերը նսեմացնում են խաղի ապա-
ւորութիւնը: Երեք անգամ զանգը խիլուց
յետոյ վարագոյրը բարձրանում է: Դուք արդէն
ծանօթ էք, ընթերցող, Օթելլօյի հետ, ուստի
աւելորդ է մի առ մի պատմել: Բեռը ներկա-
յացում է մի անտեղի փողոց, պատշաճաբ.
հրաշալի դեկորացիա: Դուրս են գալիս մեր
հայրենակից իշխան Սոււրաբով (Իւսի) Եա-
գօր դերում եւ Բօգրիգօն. եւ ոչ մի ուշա-

առջին ներկայացումը 19-ին էր. տունը «Ев-
гений Онгін» օպերան, թիֆլիսի սերիոլի օր.
Պապայանի, պ. պ. Նալոյվիլի եւ Սօբինովի
մասնակցութեամբ: Այդ ներկայացումը այնքան
էլ աղող անամբողջ չանցաւ. օր. Պապայանը
կարծես այն աստղը չէր, որ ստիպում էր եր-
կրպագել ամբողջ թիֆլիսին. օրիորդը մեզ ա-
սաց, որ նա խորհուրդով էլ առաջին ներկա-
յացման զողորում էր, չիմանալով հասարա-
կութեան արամադրութիւնը: Միայն վերջին
ակումտը օրիորդը տիրացաւ իր ձայնին, բայց
արդէն ուշ էր: Մեծ աղողութիւն ունեցաւ մի-
այն Սօբինովը, որի «Кудя, кудя»-ն ստիպեց
զղորդացնել թատրոնը բուն ծափահարու-
թեամբ: Սակայն մենք հաւատում էինք, որ
թիֆլիսը իր ուր չէ երկրպագում մեր տաղան-
գաւոր օր. Պապայանին, որ եւ նա ապացու-
ցեց «Дубровский» օպերայի մէջ Մաշայի դե-
րում: Այս անգամ օրիորդը երգում էր վստա-
ն եւ նրա քաղցրահնչուն ձայնը խորն էր թա-
փանցում լսողի հոգում: Այս ներկայացմանը
հասարակութիւնը կարծես սթափվեց եւ սկը-
մեց աւելի լուրջ վերաբերվել թիֆլիսի «աստ-
ղին»: Կարծես միայն այդ ժամանակ զգային,
թէ ինչ ոյժ է կանգնած բնի վրա: Ծափա-
հարութիւններին սահման չը կար. մասնաւոր
վերջնաւոր յետոյ, թատրոնը կարծես լցված
էր հազարաւոր ամբողջով եւ անընդհատ գո-
ռում էր «Պապայան»: Տեղական լրագրիչներից
միայն հայակեր լրագրի (Киевлянин) բեցին-
զենտը աննպաստ կարծիք յայտնեց օրիորդի
առաջին խաղի համար, իսկ միւս երկուսը
կարծես զոռւմ էին, որ անհնար է վերջնական
վճիռ կայացնել երգչուհու մասին եւ տպելին
կիսագովական բեցնողները: Սակայն «Дубров-
ский»-օպերայից յետոյ արդէն «Киевлянин»-ը
սկսեց յետ անանջել եւ կարծես զղջում էր
իր սխալը, իսկ միւսները աւելի վստա՜ գրե-
ցին քննական յօդուածները:

Առաջին ներկայացման տոնակները մի շա-
բաթ ներկայացումից առաջ արդէն ոչ պաշտո-
նապէս վաճառված էին, եւ եղան մարդիկ, ո-
րոնք 5 ր. տոմսակին 30 ր. վճարեցին. դրա-
նով օգտվեցին մի քանի խորամանկներ, ո-
րոնք այդ ներկայացման տոնակներից հա-
րիւրներ վաստակեցին:

Խմբի մէջ են Բոլական եւ Տետրացիներ, որոնք
նոյնպէս մեծ աղողութեամբ են երգում: Թատ-
րոնը միշտ լինէ է մեղմաններով:

Օպերան այստեղ կը մնայ մինչեւ մայիսի
5-ը. ապա կ'ուղեւորվի Օդեսա եւ Կիւնիսկ:
Ափսոս որ քաղաքը այս կարճ միջոցում հնա-
րաւորութիւն չի ունենայ կշտանալ լաւ օպե-
րայից:

Այսօր դնում են «Пиковая дама», երգում են
օր. Պապայան, Կիւնիսկի եւ Ամիրջան:

Բացի գաստրոլորներից խումբը ամբողջա-
պէս թիֆլիսին է:

Բ. Տ. Նարիկով օր. Պապայանին հիւրա-
նոցում գողացել են հազար ռուբլի արծող
ականջի օղբը, որ նա ստացել էր ընծայ
Բաղուսի:

դրութիւն չեմ դարձնում նրանց վրա, անհամ-
բարութեամբ սպասում եմ Օթէլլոյին. բայց
դարձեալ դուրս են գալիս Բարաանցի, ծառա-
ներ եւ այլն:

Ահա ամենքը հեռացան. Բեմը մի առ ժամա-
նակ մնաց դատարկ—եւ ահա բեմի ձախ կողմ-
ից երեւաց Օթէլլոն եւ էլի ծագան: Ամբողջ
թատրոնը մի քանի րօպէ գողցաց:

Թոյլ տուէք նախ նկարագրել ձեր առաջ
Սալվինիի շորերը, տարազը եւ գրիմը,—մեզ,
արեւելեան ազգերիս ծանօթ մի արտաքին: Գըլ-
խին ունի ոսկէ փունջով ֆէս, սպիտակ շալմալով
ծածկված. վրան երկար կապառգոյն չոր, ինչպէս
հագնում են Կովկասում յայտնի հարօտեմ
սէյիդները. լայն գոտի.—կոյտից սպիտակ վե-
րարկու, բայց կարճ, ոչ մինչեւ ոտները: Կո-
չիկները դարձեալ մեր չուստերի նման գեղնա-
գոյն, առանց կրունկների, ծայրերը սուր.
տրիկօր տեղ ունի հագած վարտիք, որ մինչեւ
ծունկերը կպած է մարմնին, իսկ յետոյ լայնա-
նում է,—ինչպէս Կովկասում, քարտաշ յոյներն
են հագնում: Այսպէս առաջին գործողութեան
մէջ. Երկրորդ գործողութեան մէջ, Կիպրոս
կղզում, հագած ունի պատերազմական զրա՜,
իսկ յետոյ, տանը, մալիքի սպիտակ շորեր: Ահա
եւ գրիմը Երեսը սեւ չէ, ինչպէս ընդունված
է խաղալ Օթէլլոն, այլ մուգ գոյնի, կամ աւելի
ճիշդն ասել թուի գոյնի. այդ գոյնը Կովկա-
սում շատ ենք տեսնում: Ունի էպանիօլ
մինչեւ երեսի կէսը, գեղեցիկ բաժանած երկու
մասի, գեղեցիկ սեւ բնիք՝ ծայրերը քիչ բարձ-
րացած վերեւ: Արտաքին տեսքը վերին աստի-
ճանի ազնիւ, գեղեցիկ եւ ապաւորիչ: Գուցէ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 4-ին

Իմ «Պէպո» կատակերգութեան երեւոյ-
մեակի տոնախմբութեան առթիւ թէ վրաց
եւ թէ հայոց թատրոններում, եւ պատիւ ու-
նեցայ ստանալու բազմաթիւ շնորհաւորու-
թիւններ այլ եւ այլ անձերից, ընկերութիւն-
ներից ու հաստատութիւններից, թէ թիֆլիսի
միջից եւ թէ Ռուսաստանի զանազան ծայրե-
րից, մինչեւ անգամ արտասահմանից:

Այնպիսով երկու հայրենակից, ինձ միա-
պէս սիրելի, վրացի եւ հայ բնակիչ համար,
պատկերացնելով ընդհանուր ժողովային զգա-
մունքներ եւ գաղափարներ, եւ չափազանց
զգածված եմ ինձ ուղղած խօսքերով ու ձա-
տերով, ստացած շնորհաւորական նամակներով,
հեռագիրներով ու ուղերձներով:

Ոչ պակաս զգածված եմ եւ այն անձանց
աշխատանքով ու հոգածութեամբ, որոնք կազ-
մել էին եւսօրեայ տոնախմբական հանդէսներ
ժողովրդական, վրաց ազնուականների ու գե-
ղարուեստական ընկերութեան թատրոններում:

Թող տուէք ինձ, ձեր պատուական լրագրի
միջոցով յայտնելու իմ արտաքին շնորհակալու-
թիւնս ու անսահման երախտագիտութիւնը
այն ամեն անձանց, որոնք այդպիսի բարձր
ուշադրութեան ինձ արժանացրին:

Գրելի Սունդուկեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաթում, ապրիլի 24-ին

«Մշակ» 84 համարում «Միսկան» գործա-
գրութեամբ տպված նամակի առթիւ հարկա-
ւոր է մի քանի խօսք տեսլ:

Պ. Միսկանը ասում է. 1) Թէ նոր կարգերի
համաձայն, եկեղեցում դանձանակ չը պէտք
է պտտեցնել. 2) Թէ ծիսակատարութիւնների
համար դասակարգով սահմանված վճարը ոչ
թէ քահանաները պէտք է ստանան, այլ երե-
ւոյթը կամ նրա կողմից նշանակված մի ուրի-
շը, անդորրագրեր տալով ներկայացնողին. 3)
Թէ քահանաները երեցփոխից չեն ստանում ի-
րանց ամսականը, այլ նրանց մօտ ժողովված
փողից եւ 4) Թէ անհրաժեշտ է կարգ սահ-
մանել եւ չափաւոր ու բարեխիղճ կերպով բա-
ժանել երկու քահանաների մէջ կատարվիւք
գործերը, որովհետեւ, մենք կասենք, Կրա-
պետ քահանան ծանրաբեռնված է, իսկ Մե-
լեան քահանան զուարճութիւններով է զբաղ-
ված:

Պատասխանում ենք պ. Միսկանի մեղա-
դրանքներին: Երեք խօսք չէ եղել, որ քա-
նակ չէ պտտեցնել, որովհետեւ դանձանակ-
ներն են միակ նիւթական աղբիւրները թէ
էջմաճանի եւ թէ եկեղեցու համար: Ժիշը է,
որ դատարն, իբրեւ բացառութիւն, երրորդ
դանձանակ պտտեցրինք, ցանկանալով տիրա-
ցունելին նուէր տալ տօնի առթիւ, սակայն
սովորական ժամանակ երրորդ դանձանակ չէ
պտտեցնում: Միսկանատարութիւնների համար
դասակարգով սահմանված վճարը, ճշմարիտ է,
առ այժմ քահանաներն են ստանում անդոր-
րագրերը պատուաւ չը լինելու պատճառով,
սակայն թող չը դարձնայ պ. Միսկանը, եթէ
ասենք, որ նոր կարգերի բազմակողմանի
հարցերի իրականացումը մի ակնթարթում չէ
կարող կենք ստանալ, մասնաւոր մեզ պէս
ժողովրդի մէջ, ուր ամեն մի ջնջին նորութիւն
աղմուկ է բարձրացնում պահպանողական բա-
նակի մէջ: Անդորրագրերը արդէն պատրաստ

չատերին յայտնի չէ որտեղից է Սալվինի
վերցրել այդ գրիմը եւ թէ չորերը: Նա պատ-
մում է իր յիշողութիւնների մէջ, թէ այդ
պատկերը վերցրել է մի մալիքի, որին պատա-
հել է իր ճանապարհորդութեան ժամանակ
Գիւրջալտարում:—74 տարեկան հասակում Սալ-
վինի մի ձայն ունի, որի նման հազիւ կարելի
է գտնել.—հրաշալի բարիտոն, եւ այնքան
զարեցած է այդ ձայնը, որ փոքր շնչոյնները
կարելի է լսել թատրոնի բոլոր անկիւններից,
իսկ զօրեղ տեղերում հնչում է յաղթական
փողի նման:

Եւ նպատակ չունեմ պատմել մի առ մի
«Մշակ» էջերում նրա խաղը, այլ կը պատմեմ
մի քանի տեսարաններ: Սկսած, դօժի եւ
սենատորների առաջ խօսելիս, Սալվինի ըս-
կում է ցած ձայնով, վերին աստիճանի լար-
գանքով, ասիական քաղաքավարութեամբ, իսկ
յետոյ, երբ նա պատմում է իր ճանապարհոր-
դութիւնների մասին, այն արկածների մասին,
որոնք թափվել են նրա գլխին, այդտեղ նա
տաքանում է, ոգեւորվում. պէտք է տեսնել
նրա երեսի միմիկան, լսել նրա ձայնի հնչիւն-
ները նրա խաղը հասկանալու համար: Յետոյ
նա յանկարծ յիշում է, թէ որտեղ է, միմիկայով
քաղաքավարի ներողութիւն է խնդրում եւ
յետոյ վերջանում է ցած ձայնով:

Բայց ահա նա լսում է Դէզդէմոնայի քայ-
լերի ձայնը... Տէր Աստուած... ինչ փոփոխու-
թիւն: Դէզդէմոնան, ինչպէս սենատորի աղջիկ,
գտնվելով իրան հաւատարմ չըլանում, մօտե-
ցում է նրան, բայց Սալվինի—Օթէլլոն միմի-
կայով իմաց է տալիս, որ փաղաքանքի տեղը

են եւ կը յանձնվեն նոր երեցփոխին:

Որ քահանաները իրանց ամսականը ստա-
նում են ոչ թէ ժողովված փողերից, այլ երեց-
փոխից, դրան ապացոյց կարող է լինել այն
փաստը, որ ծիսակատարութիւններից ժողով-
ված է ընդամենը մինչեւ 2000 ր., այն ինչ
ոտճիկներ վճարված են 3000-ից մինչեւ 4000
րուբլի:

Ինչ կարգ է ցանկանում պ. Միսկանը սահ-
մանել քահանաների մէջ կատարվիւք գործերի
վերաբերմամբ, մենք չենք հասկանում.—երկու
քահանաներն էլ ներքով վարում են իրանց
պաշտօնը: Եթէ պ. Միսկանը ակնարկում է
Մելեան քահանայի պատահական բացակայու-
թիւնների վրա, այդ հանգամանքում, յամե-
նայն դէպք, մեղաւորը Մելեանը չէ, որ հոգե-
ւոր կառավարութեան հրամանով այս կամ
այն տեղն է ուղարկվել զանազան յանձնա-
րութիւններով, այլ մենք, ժողովուրդը, որ
թոյլ ենք տուել մեր քահանային մասնաւոր
յանձնարարութիւններով զբաղեցնել եւ նրա
տեղը քահանայ չուղարկել:

Եթէ, իրօք, հասարակութեան խաղաղու-
թիւնը թանգ է պ. Միսկանի համար, նա հա-
տարակալան հարցերի վերաբերմամբ բարեխիղճ
եւ անպաշտ պիտի լինի մատուլի մէջ:

Քր. Դանիէլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք հաղորդել էինք, որ կառավարութիւնը
նշանակել է 40,000 ռուբլի նպաստ Ախալա-
լաքի գաւառի անբերրութիւնից վնասվածնե-
րին: Այդ նպաստը պէտք է արվի իբրեւ մի
փոխառութիւն, որ պէտք է վերադարձվի մի
քանի տարվա ընթացքում: Այդ նպաստի բա-
ժանման համար տեղական կոմիտէներ յատկա-
պէս հետազօտել էր վնասված գիւղերը եւ
կազմել ցուցակներ: Ներկայումս թիֆլիսի նա-
հանգական վարչութիւնը կազմում է վերջնա-
կան գեկուցում նպաստի գործադրութեան ե-
ղանակների մասին: Դիտարութիւն կայ մի-
ջին թուով տալ սերմացու ամեն մի կարօտ
գիւղացուն երկու դեսետին սերմանելու հա-
մար: Նպաստ կը ստանան այդպիսով 924 գիւ-
ղական տուն:

Մեզ հաղորդում են, որ Այվաթեան եպիսկո-
պոսը հրաւիրված է Թէհրանի առաջնորդ:

Մեզ հաղորդում են, որ հինգշաբթի, մայիսի
3-ին, մի յատուկ յանձնաժողով ուղեւորվեց
թիֆլիսից 12 վերստ հեռաւորութեան մօտ
գտնվող աղբիւրները քննելու, թէ որքան
յարմար է այնտեղից ջուր բերելը քաղաքա-
պատկան ընդարձակ հողերը ջրելու համար:
Աղբիւրները գտնվում են Լիւր եւ Օլգինսկոյե
գիւղերի շրջանում: Դիտարութիւնները եւ կա-
տարված փորուածքները համոզում են, որ
այդ աղբիւրները արդարեւ պարունակում են
ոռոգման համար բաւականաչափ ջուր:

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը.
«Կոյրերի հոգաբարձութեան կովկասեան բա-
ժանմունքի խորհուրդը, յիշեցնելով, որ «Կոյ-
րերի շարժման» այս տարի գալիս է մայիսի

չէ եւ երիտասարդի սիրահարված աչքերով
նայում է Դէզդէմոնային: Բայց ահա վերջինս
խնդրում է սենատորի, որ իրան թող տան զնալ
ամուսնու հետ, կրկին, Տէր Աստուած, հրաշ-
ուրախութեանց քիչ է մնում Օթէլլոյի սիրտը
պալթի:

Սալվինիի Օթէլլոն այնպիսի տպաւորութիւն
է թողնում, որ վերին աստիճանի ցաւակցու-
թիւն եւ զգում դէպի նա,—այդ պարզամիտ հե-
րօք: Դուք կարող էք տեսնել ինչպէս նա
քայլ առ քայլ ընկճվում է Եագօի՝ օձի նման
քաղցր փսայցով խօսքերից, ինչպէս նա կորց-
նում է առողջ գաղափարութեան կապը Յետոյ
երբ կէս-գիւ, կէս-մարդ Եագօն ապացուցա-
նում է բարեսիրտ Օթէլլոյին Դէզդէմոնայի մե-
ղաւորութիւնը, Օթէլլոն դառնում է վճռողա-
կան մարդ. եւ պէտք է տեսնել նրան այդ վայր-
կեանիս: Երբ նա ասում է Եագօին «Երեք օրից
յետոյ դու պէտք է ինձ ասես, որ Կասթիօն
կենդանի չէ», այդտեղ նա երեւում է իբրեւ
հրամանատար, որ հրամայում է գնդակահարել
զինւորին եւ ոչ թէ, ինչպէս ներկայացնում են
չառ դերասաններ, գողի նման սպանութիւն
առաջարկող է:

Երրորդ գործողութեան մէջ Սալվինի հիւ-
նայի է նախանձի տեսարանում: Այնտեղ, ուր
Օթէլլոն դուրս է գալիս «դաւաճանել, դաւա-
ճանել ինձ», յետոյ էլ «մնաք բարեաւ դուք,
անկղ կրկնել», խօսքերով, Սալվինի բոլորու-
վին ուրիշ է: Եւ մինչեւ այժմ տեսել եմ
չառ դերասաններ, սկսած հանդուրժեալ Ռօստից,
որոնք ըզուրկով են այս տեսարանը ներկայաց-
նում: Սալվինի, ընդհակառակն, դուրս է գալիս

6-ից մինչեւ 13-ը, զիմում է բոլոր բարի
ժարկանց եւ հարկադրաբար խնդրում է օգ-
նել, ով ինչով եւ որքան կարող է, կոյրերին
խնամելու եւ ուսուցանելու սուրբ գործին:
Ցանկացողները կարող են յանձնել իրանց օ-
ժանդակութիւնները բաժանմունքի պ. պ. լիւ-
գորներին, որոնք են բոլոր նահանգների եւ
չրջանների կառավարիչները, եւ կամ ուղարկել
խորհրդին (Тифлисс, Лорисъ-Меликовская
улица, канцелярія военно-окружного со-
бѣта):

Կառավարութիւնը Անդրկովկասի անաս-
նաբուժական մասի եւ անասունների ժան-
տախտային վարակման դէմ մաքառելու համար
նշանակել է 140 հազար ռուբլի:

Թիֆլիսում, վրաց կալուածական բանկի շի-
նութեան մէջ, այժմ տեղի են ունենում թիֆ-
լիսի նահանգի ազնւականութեան արտակարգ
ժողովի նիստերը: Ժողովի զբաղմունքի գլխա-
ւոր նիւթը ազնւականութեան կալուածքների
կառավարութեան այն նոր նախագիծն է, որ
մշակել է վերաւսուցող մասնագիտովը անցեալ
տարվայ արտակարգ ժողովի յանձնարարու-
թեամբ:

Մայիսի 3-ին եւ 4-ին թիֆլիսում չը ստաց-
վեց մայրաքաղաքի պօստը. պատճառն այն
աւերումներն են, որ առաջացրել են Վլադի-
կովկասի խնձուղու վրա վերջին օրերում տե-
ղացող անձրեւները:

Կառավարութեան կարգադրութեամբ Կով-
կաս ուղարկված ձիւրուծութեան մասնագէտ
Ն. Ա. Բօրօզինին յանձնարարված է, ի միջի
այլոց, նախապատրաստական աշխատանքներ
կատարել այն մասնագիտովի համար, որ այս
ամառ պէտք է այցելէ մեր երկիրը երկրագոր-
ծութեան միջնորդի կողմից պարզելու, թէ ինչ
պատճառներով աղքեցութեան տակ ընկած են
կովկասեան ձկնային բաժինների կապալազնե-
րը Ն. Բօրօզին պէտք է զբաղվի նաեւ Արաքս
գետով արհեստական խրոզով ձկան լաւ տե-
սակներ բազմացնելով:

Մտադրութիւն կայ պետական երկաթուղա-
յին գծերի կայարանների բուֆետների շահա-
գործութիւնը յանձնել երկաթուղային ծառա-
յողներին:

Բազուից հաղորդում են «Новое Обозрѣние»
լրագրին, որ Բօաշիլդ զենց մի միլիոն պուդ
կերօսին արտասահմանեան շուկաների համար,
ուստի եւ հում նաւթի գինը վերջին երկու-
երեք օրվայ ընթացքում բարձրացաւ մինչեւ
7½ կօպէկ, իսկ կէրօսինի գինը—մինչեւ 9
կօպէկ, բայց յետոյ գները նորից սկսեցին ընկ-
նել եւ այժմ հազիւ հասնում են 7 կօպէկի մի
պուդ հում նաւթի համար:

Նոյն լրագրին հաղորդում են Բազուից, որ
ընկճված քայլերով, բայց վերին աստիճանի ան-
հանգիստ եւ սկսում է մօնօրօք ցած ձայնով
յետոյ երբ յիշում է պատերազմական փառքի
յիշատակները, ձայնը սկսում է հնչել փողի
նման, բայց մօնօրօքի վերջը յուսահատվում է
եւ սկսում է լալ երեսայի նման: Մեծ պառկա
տալով Եագօն ասում է. «Կարելի բան է, գե-
կերաք»: Օթէլլոն լսեց Եագօյի ձայնը եւ լինչվեւ
յանկարծ փոխվեց այդ մարդը: Մի րօպէ առաջ
երեսայի պէս լաց լինողը առիւծ կտրեց եւ
վագրի պէս թռաւ, բռնեց Եագօի կոկորդիցի
հաւի պէս վայր գցեց, բարձրացրեց ոտը, որ
խիթ ռնչացնէ, բայց յանկարծ ինքնահաւա-
նութիւնը վերադառնում է եւ նա ձեռքը մեկն
նում է, բարձրացնում Եագօյին, իսկ ինքը
դարձեալ ընկնում է եւ լալիս...

Ո՛չ, այդպիսի վայրկեաններ նկարագրելու
համար պէտք է լինել Բէլլինսկի կամ Լիւիսի...
Եւ, նուազանց, այսքանը կասեմ, որ Շէքսպիրին
հասկանալու համար պէտք է տեսնել եւ հանա-
հարեղ դերասանին: Բաղուսի, որտեղ մի գի-
չիւրվայ մէջ տասնեակ հազարներ են տարվում
թղթախաղում, չեն գտնվի արդեօք բարերար-
ներ, որ հրաւիրեն Թօմազօ Սալվինին 5 ներ-
կայացման. նրա խաղը այժմ մի անաղին չիօ-
լայ է ապագայ սերունդի համար: Մեծ օրի-
նակներն են, որ մեզ ոգեւորում են, ոյժ են
տալիս կատարելագործվել, առաջ դնալ, աշ-
խատել:

Դերասան Գ. Պետրոսեան

այնտեղի մեքենայագործական արհեստանոցները չափերը եւ երկաթամանուկներն պահանջները դադարեցրին իրանց գործունէութիւնը։

Ներքին գործերի մինիստրութեան բժշկական զէպարտամենտում հարց է բարձրացրած բոլորովին յեղափոխելու ֆէլդշերների զրուծիւնը Ռուսաստանում։ Մտադրութիւն կայ հիմնել այնպիսի դպրոցներ, որտեղ ֆէլդշերները կարողանան թէ աւելի լայն ընդհանուր եւ թէ մասնագիտական-բժշկական կրթութիւն ստանալ։

Կովկասեան ռուսամիտարանական շրջանի վերատեսուչ Մ. Բ. Զավադսկի, ժողովրդական լուսաւորութեան մինիստրի կարգադրութեամբ, սկսեց կատարել Կովկասեան ռուսամիտարանական շրջանի հոգաբարձուի պաշտօնակատարի պարտաւորութիւնները։

Մեզ հաղորդում են ՌԱԳՈՒԻԺ, որ այնտեղի օրիորդաց ա. Նունէի դպրոցում (Заведение святой Нины) մտադրութիւն կայ եկող սեպտեմբեր ամսից բանալ ութերորդ դասարան։

«Карсэ» լրագիրը հաղորդում է, որ Կաղզւանի շրջանի Քորովան, Ննիքա, Սար եւ Քէ-դակ գիւղերի հողերում եւ Կաղզւանի շրջակայքում մորեկն եւ երեւանցի Կարսի նահանգապետը հրամանագրել է Կաղզւանի շրջանապետին անմիջապէս ձեռք առնել միջոցներ մորեկը ոչնչացնելու համար։

ՆԲՆԻԱՆԻԺ մեզ գրում են. «Վերջապէս հայ դերասանները մեր գործարան քաղաքն էլ յիշեցին Ինչպէս տեղեկացանք աֆիշաներից» Բազուի հայ դերասանական խումբը, տիկին Սիրանոյշի առաջնորդութեամբ, այս օրերս գալու է Երեւան եւ մի շարք հայերէն ներկայացումներ է տալու։ Խմբին մասնակցում են՝ տ.տ. Սիրանոյշ, Մէլիքեան եւ Զարէլ, պ.պ. Պետրոսեան, Արաքսեան, Վրոյր, Օնանեան, Յարութիւնեան, Կարինեան եւ ուրիշները։ Առաջին ներկայացումը լինելու է առաջիկայ մայիսի 6-ին եւ խաղալու են «Մէդեա»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, մարտի 30-ին

Որ մեր օրիորդները շատ քիչ պաշարով են վերջացնում դպրոցը, այդ լաւ յայտնի է։ Այն էլ յայտնի է, որ դպրոցից դուրս տարած կրթական եւ թերի ուսումը շատ չուսող մտանում են, երկար ժամանակ իրանց միաճն անգործութեան մէջ թողնելով եւ տան չորս պատերի մէջ փակված մնալով։

Այն միտքը, թէ հարկաւոր է օրիորդաց դպրոցին դասարաններ աւելացնել, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ տղաները ճանապարհորդութեամբ, չլիւսով կարող են զարգանալ եւ բացի դրանց յարմարութիւն ունեն ռուսին շարունակելու, մինչդեռ օրիորդները դուրի են գրանցից—այդ միտքը իրագործվեց անցեալ տարի երկու թաղի դպրոցներում էլ մի-մի դասարան աւելացնելով։ Բայց դա մի ոչ այնքան իրական օգուտ տուեց եւ կարող է տալ։ Հաստատու շատ պարզ է։ Մեր ընտանեկան, գասարակական կազմակերպութիւնը եւ նախապաշարմունքները թող չեն տալիս, յարմարութիւններ չեն ընծայում օրիորդներին գոնէ ինքնակրթութեամբ, տղամարդկանց չընդունելով մտնելով, ընթերցանութեամբ եւ այլն դարգանալու։ Մի ուրիշ պատճառ էլ վաղա-հաս ամուսնութիւնն է։ Օրիորդները պարզը եւ ազա արհեստանոցի դասընթացը վերջացնելուց յետոյ, թէ ամուսնանալիս եւ թէ ոչ, կորում են, կամ աւելի ճիշտն ասած՝ ասիւ-ված են կարել իրանց յարաբերութիւնն արտաքին աշխարհի հետ։ Շատ քիչն են օգտուում այն դիւրութիւնից, որ տալիս է զարա-նական ընկերութիւնը իր դասախօսութեամբ, որ, պարզ բան է, քիչ շատ կարող է նպաստել օրիորդների մտաւոր զարգացման։

Այդ է պատճառը, որ այստեղ շատ քիչ տար-բերութիւն կայ կանանց հին եւ նոր սերնդի մէջ։ Միայն մի քանի բացառութիւններ կան, որոնք չեն հետեւում հների գծած շաւղին, իսկ մեծամասնութիւնը նոյն տգէտ-թերութեան, նոյն նախապաշարված, նոյն քաշվող, աւանդական կարգերին հնազանդվող կանայք են, ինչ որ իրանց մայրերը իսկ գլխաւոր պակասութիւնը կայանում է նրանում, որ նոր օրիորդները նոյն ուղորմելի, սահմանափակ հասկացողութիւն

ունեն ընտանիքի, տանտիկնութեան եւ ամուս-նութեան մասին, ինչ որ հները։ Եւ դա շատ բնական է։

Կանանց ընկերութիւնների արհեստանոց-ները, որ ռուսամիտարան աւարտելուց յետոյ յաճախում են օրիորդները, պարտականութիւն ունեն այդ թերի կրթութիւնը լրացնելու։ Այդ բարոյական պարտականութեան մասին խոր-հուրդներ են տրվել յաճախ, որոնց թէեւ հե-տեւեցին Լիւաւայի եւ Ղալայի ընկերութեան վարչութիւնները, բայց մի այնպիսի քայլով, ռուսութիւնների եւ դասերի մի այնպիսի սխալ ընտրութեամբ, որ արդիւնքը համարեալ թէ անօգուտ եղաւ։ Բանն այն է, որ ընտրած դասերի մի մասն այնքան էլ կարեւոր չէ։ Սովորեցնում են (Ղալայում) թուաբանութիւն, մի բոլորովին աւելորդ բան (խոստովանում են իրանք օրիորդները) քանի որ այդ նոյն բանը անցել են դպրոցում, եւ իբր թէ հայերէն «Իբր թէ» որովհետեւ մի երկու գիրք կար-դալ չէ նշանակում հայերէն դաս տալ, մա-նաւանդ, որ ռուսուցիչը փոխանակ «դասով» զբաղվելու, խօսում է չարժանակ իր գանազան տեղ արած վիճաբանութիւնների, խօսակցու-թիւնների մասին...

Փոխանակ այդպիսի անհամապատասխան ըն-տրութեան, երկու ընկերութիւններն էլ լաւ կանխին, եթէ հրաւիրէին մի այնպիսի ռուս-ցի, կամ աւելի լաւ ռուսուցիչ, որ հայերէն լեզուի (աւելի ընդարձակ, լայն մտքով հասկա-ցած, եւ ոչ չոր-ցամաք) եւ տարրական գի-տութիւնների հետ միաժամանակ օրիորդներին դասախօսէր ընտանիքի, տանտիկնութեան, ա-մուսնութեան եւ ճշմարիտ մայր լինելու մա-սին։ Այս աւելի կարեւոր է, քան թէ զանա-զան անմիտ խօսակցութիւններն...

Թող չառարկեն թէ սրանով մի աւելորդ ծախս կը ծանրանայ ընկերութիւնների վզին։ Զէ որ զանգատում էք մայրերի տգիտու-թեան, ընտանիքի մասին շատ խեղճ հասկա-ցողութիւն ունենալու, որդոց քիչընտանեան դաստիարակութիւն կրթութիւն տալ չը գի-տենալու մասին։ Իսկ այդ օրիորդներն վաղ թէ ու մայրեր պիտի դառնան, ընտանիքներ պիտի կազմեն։ Եթէ ցանկալի չէ, որ նրանք այդ բոլոր պակասութիւններից զերծ լինեն, վերոյիշեալների մասին մի ամփոփ, կամ նոյն իսկ բազմակողմանի հասկացողութիւն ունե-նան,—ընտանիքի կազմութիւնն ու նոր սերնդ-ի կրթութիւնն ամօրը հիմքերի վրա դնել, մանաւանդ որ ընկերութիւններն էլ միջոցներ ունեն։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԹԵՐ

—Երիտասարդ-թիւրքերի կուսակցութեան հակակառավարչական քարոզութիւնը օր քառ օրէ ծաւալվում եւ վտանգաւոր է դառնում թիւրքերի այժմեան վարիչների համար։ Մինչ-հե այժմ թիւրք հոգեւորականութիւնը, չնոր-հիւ այն առատ նուիրաբերութիւնների, որոնք անընդհատ տապալում էին իլլիդ-հիւսակից յո-գուտ թիւրքական հոգեւոր հիմնարկութիւն-ների, հետո էր պահում իրան երիտասարդ-թիւրքերի կուսակցութեան հետ չփոխու-ց, սակայն այժմ գտնվում են հոգեւորականներ, նոյն իսկ անուանի ուղէմները, որոնք յայտնի կերպով միանում են կառավարութեան յսկերիմ իշխաններին։ Կամենալով դրանք հոգեւորա-կաններին, սուլթանը վերջին ժամանակ հրա-տարակեց մի իրադէ, որով հրամայում է վա-գուցիների մինիստրին արգելել ուղէմները եւ մոլլաների ռոճիկը եւ բաժանել նրանց միա-նուագ առատ օժանդակութիւնների։ Բայց եւ այնպէս թիւրք հոգեւորականութեան մէջ գտնվում են անշահաւոր եւ կրթված անձինք, որոնք արհամարհում են սուլթանի չնորհները եւ փախչելով Եւրոպա, օրինակ են հանդիսա-նում եւ որդիների համար։ Այդպիսի հոգեւոր-ականներից է եւ Կ. Պոլսի գլխաւոր մզկիթ-ներից մէկի տաղանդաւոր քարոզիչ ուղէմ Սու-լէյման-Մէմլուխ-էֆէնդին, որի փախուստը մեծ արտօնութիւն պատճառեց թիւրք կառա-վարութեանը։ Սուլէյման-Մէմլուխ-էֆէնդին այժմ գտնվում է Աթէնքում։ Նա մտադիր է հրատարակել այնտեղ հակակառավարչական ուղղութիւն ունեցող մի լրագիր, եթէ միայն թիւրքայի գիւղատնտիական ներգործութիւնը Յունաստանի պիտի արգելք չը գտնայ նրա մտադրութեանը։ Կ. Պոլսի լրագիրները հազոր-դում են, որ երիտասարդ-թիւրքերի կողմն է անցել եւ Լոնդոնի թիւրքական հիւպատոս Սալիլ-Սալիլդա-էֆէնդին։

—Բօւրսական զօրքերի գլխաւոր հրամանա-տար Լուի Բօտայի կնոջ անակալիս կերպով քաղաքական ապագայի իշխելը, իբրեւ միջնորդ իր ամուսնու եւ գեներալ Կիւլինների մէջ, ընդհանուրի ուշադրութիւնը դարձրեց այդ կնոջ վրա։ «Neue Zurichische Zeitung» լրագրի տեղե-կութիւններով Բօտայի կինը այժմ մօտ 30 տարեկան է։ Նա շատ գեղեցիկ է եւ լաւ կրթված—մի երեւելի, որ շատ հաղապիտ է բօւրսական կանանց շրջանում։ Մնվել է նա

Օրանժեան հանրապետութեան մէջ, որտեղ նրա հայրը պարսպում էր փաստաբանու-թեամբ։ Նա սերված է ուղիղ գծով իրանդացի յեղափոխական եւ ազատութեան համար մար-տնչող ինքնապաշտ, որ պատմութիւն ծագեցրեց իրանդիայում 1803 թիւին Ապստամբութիւնը ճնշվեց եւ ինքնապաշտը մահացաւ պատժի-կախով տիկին Բօտայ, քիչ պատճառներ ունի տիրելու անգլիացիներին, եւ եթէ նա այնու-ամենայնու յանձն է առել միջնորդի դեր, դա միայն նրա համար է, որ աշխատի վերջ դնել պատերազմի անգլոթիւրքներին։ Բօւրսական շրջաններում ենթադրում են, թէ նա միջնորդի դեր է վերցրել այն նպատակով միայն, որ հնարաւորութիւն ունենայ տեսնել իր ամուս-նու հետ, որովհետեւ այլ կերպ նա չէ կարող տեսնել Բօտայի հետ։

—Ինչպէս հաղորդում են արտասահմանեան լրագիրները, ժողովի համալսարանում ուսա-նում են մօտ 600 օտարերկրացի ռուսողներ։ Մօտ օրերում կառավարութիւնը կարգադրեց արտաքին Շվեյցարիայից շատ ռուսողների քաղաքական գործերի համար։ Այս պատճառով միւս բոլոր ռուսողները գործադուր արին եւ յայտնեցին, որ եթէ Շվեյցարիայից ար-տաքին ռուսողներին իրաւունք չը տրվի յետ դաժնալու, այն ժամանակ բոլոր ռուսող-ները կը դադարեն համալսարան յաճախելուց։

—«La Fronde» վերցնում է Կլէմանսօյի յո-դուածից հետեւեալ հատուածը, որ բնորոշում է քրիստոնէայ քարոզիչների գործունէութիւնը Չինաստանում եւ որ նա բառ առ բառ քաղել է վաւերացիներից («Les Annales de la Saint-Enfances»)։ «Եկե՛ք նորից այցելելու Պէկինը Ա-նարա-Յիւանքան» ապաստարանը։ Տեսնում էք այս համեստ դուռը։ Անգլիկ թեմով փոքրիկ եղբայրների եւ փոքրիկ քոյրերի համար այս տարի երկնքի դուռն է եղել սա... Ձեռն սխալ-վում, այս դռնով մեզ տուել են 873 փոքրիկ մանուկներ, իւրաքանչիւրը 45 սանտիմով (մօտ 20 կօպէկ), եւ այդ թիւից 843-ը մեկն են սուրբ մկրտութեան առաքելի մէջ վերածնվելուց յե-տոյ... Մեր ապաստարանները չափազանց լիքն են... եւ եթէ այդքան մեծ թեմով երեխաներ չը-թային նա աշխարհը, տեղ բաց անելով ուրիշ-ներին համար, վաղուց ի վեր մենք այլ եւս չէինք կարողանալու ընդունել ոչ ոքի ձեր փոքրիկ հո-գնաւորներին։ Տօկեր մի երեխայի պա-նկը մօտ 5 ֆրանկ (2 բուլբլ) է նստում ամի-սը։ Ի սրտէս ցանկանում եմ, ի հարկէ, որ այդ թանկագին փոքրիկ հոգիները որքան կարելի է շուտ հեռանան մեզից ու գնան երկինք։ Բայց եթէ նրանք չուզեն մեռնել, չէ որ պէտք է նրանց կերակրել, կրթել։ Ինչպէս տեսնում էք, շատ գլխաւոր են քրիստոնէայ քարոզիչ-ները։

—«Figaro» հաստատում է այն լուրը, թէ Սենկիւիլի իր «Հրով եւ սրով» վէպի գրամալի փոխադրելու իրաւունքը գիշել է Սարա Բեր-տրին։

—Շվեյցարիայում կանայք այնքան առաջա-դիմել են, որ այդ փոքրիկ երկրում այժմ գո-յութիւն ունեն 5,965 կանայք ընկերութիւն-ներ։

—«La Fronde» հաղորդում է, որ 55 մահմե-դական հնդիկ օրիորդներ այժմութեամբ քննու-թիւն են տուել եւ մեկը Հնդկաստանի Բոմբէյ քաղաքի համալսարանը։

—«Berliner Tageblatt»-ի թղթակիցը գրում է Կ. Պոլսից. «Փողի պակասութեան պատճա-ռով մի քանի անգամ յետաձգված դեսպանու-թիւնը դէպի Չինաստան վերջապէս վերջին օրերում ճանապարհ ընկաւ Կ. Պոլսից։ Դես-պանութիւնը բաղկացած է երկու ուղի մէջ եւ երկու երկու գեներալներից, որոնց գլուխ է կանգնած Էնվէր-փաշան։ Շատ խօսակցութիւն-ների տեղիք տուեց այն հանգամանքը, որ Էնվէր-փաշան այդ ճանապարհորդութեան ժա-մանակ վերցրել է իր հետ եւ իր որդոց դաս-տիարակչուհուն, մի գերմանուհու, որին հա-մազել է ուղեւորվել դեսպանութեան հետ Չի-նաստան։ Որովհետեւ այդ դեսպանութեան նպատակը կրօնական է, ուստի սուլթանը, լսելով այդ մասին, ինչպէս ասում են, աստուիկ բարկացել է եւ հրամայել է դուրս հանել նախից գերմանուհուն մօտակա նաւա-հանգիստներից մէկում։ Այստեղանային չեն կարծում, որ Էնվէր-փաշան կատարէ այդ հրա-մանը։ Ստիպել նրան չէ կարելի, որովհետեւ այն նա, որով գնում է Էնվէր-փաշան, ռուսա-կան զրօշակի հովանաւորութեան տակ է։ Մի քա-նի բարձրաստիճան անձեր մինչեւ անգամ կա-նւած են յայտնում եւ ասում, թէ Էնվէր-փաշան չի վերադարձնալ թիւրքիս եւ կը միանայ բազ-մաթիւ թիւրք փախսականներին, որոնք այժմ գտնվում են արտասահմանում եւ ամեն կերպ աշխատում են արտասահմանից թիւրքիս ու-ղղակած լրագիրներով, պրօկլամացիաներով եւ բրօշիւրներով բանալ թիւրք ժողովրդի աչքե-րը այն վնասակար ընթացքով, որով այժմ է անցել եւ Լոնդոնի թիւրքական հիւպատոս Սալիլ-Սալիլդա-էֆէնդին։

—Ապրիլի 20-ին անգլիայի յայտնի ազատա-միտ գործիչ Ասկիւր Մէրիէթսօնի միութեան ժողովում արտասանեց մի ընդարձակ քաղա-քական ճառ, որը իր վրա զարձրեց ընդհանուր ուշադրութիւնը։ «Անգլիայի պատմութեան մէջ,—ասաց ճառարարը,—քիչ կը գտնվեն բօ-պէններ, երբ դիմադրական կուսակցութեան եռանդուն գործունէութեան այնքան մեծ կա-րիք զգացվել, որքան ներկայ րօպէտու վեր-ջին երկու տարվայ ընթացքում դիմադրական կուսակցութեան այնպիսի գործունէութեան

համար պայմանները անպատ էին, որովհե-տեւ ազատամիտների մէջ տիրում էին տարա-ձայնութիւններ։ Բայց նրանք այժմ չը կան։ (Մափահարութիւններ)։ Կարող եմ հաւատա-նել ձեզ, որ հիմա վէստմինստէրեան պալա-տում կայ միասիրտ եւ մաքառման համար կազմ ու պատրաստ դիմադրական կուսակցու-թիւն։ Առաջին անգամ, ինչ որ մենք պէտք է անենք,—դա կառավարութեան 130 ձայների մեծամասնութիւնից ազատվելն է։ Եւ եւս կար-ծում եմ, որ դա կը լինի շուտով։ (Մափահա-րութիւններ)։ Կը գտնվեն մարդիկ, որոնք կը լսեն պահանջողականների տեղը։ Ասկիւրի առաջարկութեամբ ժողովը ընդունեց հետե-ւեալ որոշումը. «Ժողովը կարծում է, որ այժմ-ման կառավարութիւնը անարժան է երկրի վստահութեանը եւ որ երկրի տնտեսական եւ քաղաքական շահերը պահանջում են, որ Անգ-լիայի կառավարութիւնը պահանջողականների ձեռքից անցնէ ազատամիտ կուսակցութեան ձեռքը»։

—«Սարա» լրագրին գրում են Միտլինայից, թէ քիչ ժամանակ առաջ Կ. Պոլսում տեղի ունեցած երկրաշարժից յետոյ այդ կղզու վրա հանքային ջրերի աղբիւրները երբեմն անյա-տնում են, երբեմն նորից երևում, եւ երբեմն սկսում են բլխել նոր աղբիւրներ նոր տեղե-րում։ Կղզու վրա տեղ-տեղ գտնվող պատը-վում, փուլ է գալիս եւ առաջացած խորու-թեան մէջ կազմվում են լճեր, իսկ ուրիշ, տա-փարակ տեղերում յանկապ թարձրանում են բլուրներ եւ փոքրիկ լեռներ։ Առաքելված ժո-ղովրդի երեւակայութիւնը նախագուշակում է ամեն տեսակ զարհուրանքներ։ Երկիւղ են կրում, որ կարող է հրաբխային ժայթքումն պատահել կամ նոյն իսկ կղզին ամբողջովն անյայտանալ։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 մայիս

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Մայիսի 2-ին ճանապարհ ընկաւ Պրինցուհի Եւգենիա Մակսիմիլիանովնա Օլգենուրդսկայա։

Մայիսի 3-ին արտասահմանից վերադարձաւ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաւիչ։

Նիժնի-Նովոգորոդ. Վեպուգալում ջրի տակ գնաց «Ելիսաւիլտ» ապրանքատար չոգենաւոր։

Ճանապարհորդները ազատվեցին։ ՊԵՆՁԱ. Գնեւարիսիմուս Սոււօրօվի նախ-կին ժառանգական կալուածքը, Մօկաւսկի գաւառի Մարօվսկայա փոստը, ի յիշատակ մեծ զորավարի, այժմ Սոււօրօվսկայա է վերա-կոչված, իսկ այդ կալուածքի գլխաւոր գիւղը, Մարօվկա, անուանված է Սոււօրօվ գիւղ։ ԿՕՎԵՆՈ. Աշխանացանը նահանգի ամեն կող-մերում բաւարար է. գարնանացանը սկսվել է։ Եղանակը տաք է եւ չոր։

ԼՕՆԴՈՆ. Բօմբէյից ոչ-պաշտօնական ձեռով հաղորդում են, որ Դէվլան կրկին ներս խուժեց Կապի զաղթականութիւնը եւ կանգնած է Զուրեան լեռներում մէկ մեծ թնդանօթով։ Բօւրսական փոքր զորաբաժիններ երեւային Զուրեան լեռներում։ Նաուվաօրտի մօտ—Հա-զորդում են, որ մի քանի օր առաջ Կապի զաղ-թականութիւնը ներս խուժեց հարեւր մար-դուց բազկացած մի զորաբաժին—ինչպէս Կրա-դօկից հաղորդում են, 30 հեծեալ հրացա-նաձիգներից բաղկացած անգլիական զորաբա-ժինը Նաւլաւադի մօտ եղած կուր մէջ երեքաւթթի օր կորցրեց չորս սպանվածներ եւ վեց վիրաւորվածներ։

ՊԵՆՏՐՈՒԱ. Հաղորդում են, որ աւատարիա-կան հրացանաձիգները գերի վերցրին 27 մարդ Պրետորիուսի զորաբաժնից։ Ինքն զորաբաժինը ցրված է։

ԵՕՂԱՆԷՍՏՈՒՐԳ. Քաղաքային ներկայա-ցուցչութիւն հիմնելու մասին ծանուցումը կը հրատարակվի մի քանի օրից յետոյ։

ՊԱՐԻՉ. Յայտարարված է, որ ռուսաց փո-խաւորութեան համար ստորագրութիւնը կըն-դունվի Բօտայի բանկային տան մէջ մայիսի 22-ից սկսվելուց 981/2% գնով կամ 492 ֆրանկ 50 սանտիմով օրիգալայի համար, որի անուանական գինը 500 ֆրանկ է։ Ստո-րագրութեան ժամանակ մտցնում է 50 ֆրանկ, բաժանումից յետոյ—100 ֆրանկ, սեպ-տեմբերի 2-ին—200 ֆրանկ եւ դեկտեմբերի 2-ին—մնացած 1421/2 ֆրանկ։

4 մայիս

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Հրատարակված է ֆինանս-ների մինիստրի շրջաբերականը, որով թող է տրվում շաքարի ազատ պաշարի մի մասը բաց թողնել ներքին վաճառանոցը առանց լրացու-ցիչ աւուրք վճարելու։

Գնեւար Պրօքսիմովի հեռագիրը Սարաւովս-կից. «Ապրիլի 24-ին կարգադրեցի վերադնել պատերազմական դրութիւնը Զաքաւայեան

3-6

4-100

2-2

2-6

Վ. և Ի. Մուշեֆյաններին, Նաբերեժնայա փողոց, տուն կրասնիսինեանի, № 27: ՆՕՎՐՈՐՈՍՆ
ՅԻՑՍԱ—Վլադիկավկազի երկաթուղու առևտրական գործակալներին (Ե. Հ. չ.) 17—20

(*μ*. 5, 26 *μ*λ⁵. 16 *μ*λ¹. 7)